

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

ՀՀ Լոռու մարզպետի մոտ խոշորացված և Գուգարքի տարածաշրջանի համայնքների ղեկավարների հետ անցկացված խորհրդակցության

17.01.2018թ.

ք. Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Գարբինյանը - մարզպետի տեղակալ
Տ. Բադոյանը - մարզպետի տեղակալ
Հ. Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
Վ.Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Հ.Պապոյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Ա.Շահվերդյանը, Ա.Օհանյանը, Ա.Սահակյանը,
Ս.Ղուբաթյանը, Հ.Մկրտչյանը, Ժ. Ղազարյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների
ղեկավարներ
Ա. Սարգսյանը - մարզպետի օգնական
Տ. Էվինյանը - մարզպետի օգնական
ՀՀ Լոռու մարզի խոշորացված և Գուգարքի տարածաշրջանի համայնքների ղեկավարները

Օր ա կ ա ր գ ու մ`

- Համայնքների սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքների մասին
- Համայնքների 5 – ամյա զարգացման ծրագրերի կազմման մասին
- Համայնքի գույքի կառավարման և օգտագործման մասին
 - հողի և գույքահարկի բազաների ճշգրտման աշխատանքների մասին
 - գույքի վարձակալության պայմանագրերի կնքման մասին
- Գյուղատնտեսության ոլորտում իրականացվելիք աշխատանքների մասին
 - գյուղատնտեսական կլաստերների տարանջատման և դրանց հիման վրա ժամանակակից տեխնոլոգիայով ինտենսիվ այգիների հիմնման մասին
 - հակակարկտային ցանցերի ներդրման մասին
 - գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության` լիզինգի պետական աջակցության ծրագրերի մասին
 - սպանդանոցային կառույցների և այդ ուղղությամբ իրականացված ծրագրերի մասին
 - տոհմային անասնաբուժական տնտեսությունների ստեղծման ծրագրերի մասին
 - սառնարանային տնտեսությունների ստեղծման ծրագրերի մասին
 - ռոտզելի գյուղատնտեսական նշանակության հողերի մասին
- Համայնք - մասնավոր հատված համագործակցության մասին
 - համայնքների կողմից տրամադրվող ծառայությունները մասնավոր հատվածին պատվիրակելու մասին
 - կառավարման, վարձակալության (լիզինգ), կոնցեսիոն, ներդրումային և այլ տիպի պայմանագրերի կնքման մասին

6. Համայնքներում չօգտագործվող պետական, համայնքային և մասնավոր գույքի նպատակային օգտագործումն ապահովող ծրագրերի մասին
 - . պետական և համայնքային գույքը՝ մասնավորին փոխանցելու, ինչպես նաև մասնավոր գույքի օգտագործմանը նպաստելու տարբեր միջոցների կիրառման մասին (հստակ չափորոշիչների սահմանում ներդրումների չափի, նոր ստեղծվող աշխատատեղերի և այլնի վերաբերյալ)
7. «Մաքուր Հայաստան» ծրագրի իրականացման մասին
 - . համայնքներում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները ինքնաձախսածաձեկման եղանակով կատարելու մասին
 - . իրավաբանական անձանց հետ կնքվելիք աղբահանության պայմանագրերի մասին
8. 2017 թվականի համայնքի բյուջեի կատարման տարեկան, 2017 թվականին համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման և դրանց հանրային լուսմաների կազմակերպման մասին
9. Մարզում գորակոչի անցկացման մասին

Առաջարկվեց

Ներկա համայնքների ղեկավարներին

1. ա/ Հատուկ ուշադրություն դարձնել համայնքների սեփական եկամուտների հավաքագրման գործընթացին
բ/ 2018թ. համայնքների բյուջեներում ևս մեկ անգամ վերանայել սեփական եկամուտների ծրագրային ցուցանիշները ըստ հողվածների:
2. ա/ Մշակել 2017թ. խոշորացված համայնքների 5-ամյա զարգացման ծրագրերը և տարեկան աշխատանքային պլանները / ժամկետ՝ 30.03.18թ/
բ/ Գուգարքի տարածաշրջանի համայնքներին՝ մեկամյա ժամկետում մշակել տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն իրենց 5-ամյա զարգացման ծրագրերի;
3. Աշխատանքներ տանել հողի հարկի և գույքահարկի բազաների ճշգրտման, համայնքային գույքի վարձակալության տրամադրման ուղղությամբ:
4. Համայնքներում գյուղատնտեսության բնագավառում զարգացնել նախատեսվող հետևյալ ուղղությունները՝
ա/ գյուղատնտեսական կլաստերների տարանջատման և դրանց հիման վրա ժամանակակից տեխնոլոգիայով ինտենսիվ այգիների հիմնում
բ/ հակակարկտային ցանցերի ներդրում
գ/ գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալություն
դ/ սպանդանոցային կառույցների թվի ավելացում
ե/ տոհմային անասնաբուծական տնտեսությունների ստեղծում
զ/ սառնարանային տնտեսությունների ստեղծում
է/ ռոտգելի գյուղատնտեսական նշանակության հողերի ավելացում:
5. Համայնքների կողմից մատուցվող ծառայությունները հնարավորության դեպքում իրականացնել մասնավոր հատվածի կազմակերպությունների միջոցով՝ կնքելով համապատասխան պայմանագրեր:
6. Վարչապետի հանձնարարության համաձայն համայնքներում իրականացնել գույքագրում չօգտագործվող, պետական, համայնքային և մասնավոր գույքի վերաբերյալ և ստեղծել բազա՝ մարզպետարան ներկայացնելու համար

/ժամկետ՝ 28.02.2018թ./

7. Կատարել աղբահանության վարձավճարների գանձումը ինքաձայնաստացանկան եղանակով և կնքել պայմանագրեր իրավաբանական անձանց հետ :

8. Կազմակերպել 2017թ. համայնքների բյուջեների կատարման տարեկան և 2017թ. համայնքների զարգացման ծրագրերի իրականացման վերաբերյալ հանրային լսումներ:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Արձ. Մ. Հովհաննիսյան

Հեռ. 0322 /2-31-99/